

ՊԱՅՄԱՅՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան ... 12 Ֆր.

Վեցամսեայ ... 6 "

ՍՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիս մեկ ծրարով

Տարեկան ... 12 Ֆր.

Վեցամսեայ ... 7 Ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօրա

ԿԱՆԿԻԿ

Ծանոցման օրը
20 սեպտեմբեր



Լ Բ Ա Գ Ի Բ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԻ ՔՇՈՒՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Redaction du journal

„Isvestnik“

VARNA (Bulgarie)


Редакция

на ВѢСТНИКЪ

Иравуник

ВАРНА

Գրադարանը եւս չկն
տրոշիր



ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՇ ԿՈՒՍԱԿՑԱՍՈՒԹԻՒՆ

Ընկնում եւ ազատագրութեամբ
կարող ժողովուրդի մը գերա-
զոյն ապաւենը պէտք է որ ըլ-
լայ յեղափոխութիւնը, ներքին
կենսական ուժերուն զոհողու-
թեան ոգիին վրայ հիմնուած, ու
չըլհայեցութեամբ արտաքին
պարագաներու հետ օղակաւոր-
ուած, մանաւանդ մեզի համար
որ չենք կրնոր ամեն բան մեր
ներքին ուժերէն սպասել:

Իսրաւոր ստրկութեան ըն-
տելացած կենդանի-մեռեալ հո-
գիները են միայն որ չուտով
ընդվզել չունին, յեղափոխու-
թեան պէտքը չեն տեսներ, յե-
ղափոխութիւնը որ աշագին զո-
հողութիւններ կը պահանջէ մե-
նէ մինչդեռ մենք չենք ուզեր
մեր այսօրուան հանգիստէն, մեր
գեղատաքը, եսականութիւնէն
մառ մը զոհել ազատութեան սի-
րոյն, գէթ այսպէս մեծ պար-
տականութիւն մը կատարած ու
վաղորդայնի վարդապետի ար-
աւատին արժանացած ըլլալու
անհուն գոհունակութեամբ:

Արտասահմանի հայութեան
ստուար, մէկ զանգուածը, ան-
տարբերներու բանակը ըսել կու-
զենք, ի՞նչ երեսով պիտի երթայ
վայելի ազատութեան բարեք-
ները՝ եթէ վաղը երկինք մե-
զի ժպտի կարելութեան մէկ
քմահաճոյքովը:

Հազարաւորներով կը համբու-
րն արդարեւ արտասահմանի մէջ
այն հայերը որոնք՝ ազգին այս
ճգնաժամի օրերուն մէջ՝ ոչինչ
չով կը հետաքրքրուին, մէջ մէկ
Սողոմոն իմաստուններ եթէ կու-
զէք, որոնք առերեւոյթ գոհ
ըլլալով կը ձեռնան բանի մը
խառնուած չըլլալուն համար,
ինչի՞ ծառայեցին յեղափոխու-
կան խնդր ու խելար շարժում-
ները՝ եթէ չէ կտորածներու
անվերջ շարքի մը առանց որ
է գրական արգիւնքի:

Պարզ հանգիստտեսներ են ա-
սանք, որոնք թէպէտ անտար-
բեր չեն ազատութեան հանդէպ,
ձրի ըլլալու պայմանաւ:

Իրենց՝ չորս կողմերնից երբ
եւրոպական հսկայ միջինի մը
հայանաւոր լուրը կուգայ մեզի-
ամենէն անտարբեր հայը անգամ
այն ատեն ազգասէր կը դառ-
նայ, ձրիարար աւելորդ ըլլայ
ըսել մարդու պէս ապրելու տեն-
չը կարծես այլ մէջ ալ ան
պահ մը չի քննադատեր սա
անուղղայ յեղափոխականները, ո-
րոնք ազգին գլխուն այնքան
չարեքներ հասուցին, բայց՝ քիչ
վերջ՝ երբ այս յուսատու լուրի-
քը անմիջական իրականութեան
մը գոյնը չեն առնեն՝ խեղճ
մարդը նորէն կը թուէ՝ յ, նո-
րէն կը մտածէ թէ պահպանողա-
կանութիւնը, պապենական ստոր-
կութիւնը ապրելու լաւագոյն
միջոցն էր անտէր հայուն հա-
մար: Նէֆիլէ տըր Եֆէնտիմ,
իշխէ պապ:

Պէտք է զարմանալ երբ մեզի
պէս ստրկացած ազգ մը իր մէջ
ունի այսպէս նեղ մտածողներու,
ձրի ազատութիւն վայելելու ըն-
դունակ բանակ մը: Պէտք է ըս-
պասել որ ժամանակը ներգործէ
իր բարեբար ազդեցութիւնը
ասանկ խորհողներու ողորմելի
գասակարգին վրայ, և մեր մեծ
սխալը արդէն հոն եղաւ որ
չտապեցինք մեր քայլերուն մէջ,
առանց կանխապէս ժողովուրդին
մեծ զանգուածը պատրաստած
ըլլալու պարտաճանաչութեան
ինչպէս և ամէն կարգի երեւա-
կայնի զոհողութիւններու: Յե-
ղափոխութիւնը ձրիակերութիւն
չի նշանակել, և ոչ ալ ոչխարի
պէս մորթուիլ:

Մեր յեղափոխականները ու-
րեմն իրաւունք չունին սպասելու
որ ամեն մարդ իրենց պէս
զգայ իրենց նման ազգին պար-
տաճանաչ գաւազներ ըլլալ:

Թէ ինչու միայն մաքի յեղա-
փոխականներու ոչ խոտելի գա-
տակարգ մը, ան որ ինտելիգենտ
կոչուելու իրաւունքը ունի,
անտարբեր չէ, յեղափոխութեան

կը համակրի բայց ուղղակի թէ
անուղղակի որ և է կուսակցու-
թեան չի պատկանիր: Չեղբու-
թիւնը, արդարեւ, ներկայ պա-
րագաներու մէջ, անտեսելի է
ինքզինքը իսկապէս ինտելիգենտ
գաւառներ համար:

Փորձառութեան վրայ յիշելով
և «Իրաւունք»ի համակրելի ան-
կողմնակալութիւնէն օգտուած
կարող ենք կարծ խօսքով եզ-
րակացնել թէ, այս դասակար-
գին չեղբութեան մեծ պատճա-
ռը բուն իսկ մեր յեղափոխա-
կան գլխները եղած են, անոնք
որ յեղափոխութիւն ըսելով կու-
սակցամոլութիւն հասկցած են:

Ու ցաւալին հոն է որ կուսակ-
ցամոլութեան անհաշտ ոգին հե-
տըզհետէ ժամտախառն համե-
մ տուիւններ կառնէ, մարդա-
քաղաքներէն սկսեալ մինչև գիւ-
ղաքաղաքներու մէկ աննշան
անկիւնը, յեղափոխական մեծ
գլխներէն սկսեալ մինչև յեղա-
փոխական ամենատղէտ խաւերուն
մէջ խոր արմատ ձգած:

Որ և է գաւառներ, որ և է
մարդկօրում սկզբունքներու մէջ
զօրաւոր հաւատքը—մոլորեալ-
ութիւնը չըսելու համար: ան-
հրաժեշտ է այդ սկզբունքները
թերահաւատներուն ու մտքով
աշխատներուն ըմբռնելով տա ու
համար, և մենք այս համոզումով
չպիտի ուզէինք այնքան ծան-
րանալ կուսակցամոլ բառին վը-
րոյ, եթէ միայն այդ բառին
բոլոր տեղի սեւացրելուն ու
տեղումները լոյ կուսակցական
ներքին խնդիրներու մէջ սա-
մանափակուած մնային:

Բայց ո՞չ աւագ չեղբներն ու
խել մը չեղբ ձեռնարկներ—ինչ
պէս եկեղեցական, գաղտնական,
որբախմամբ, աղքատախնամի
և ուրիշ խնդիրներ— շատ
անգամ դժբաղդ զոհերը ե-
ղած են այս կուսակցամոլներու
տղիւտութեանը ու իրար հանդէպ
ունեցած եղբայրատեցութեան
անճշունի ոգիին:

Չենք գիտեր ուրիշ երկիր-
ներու համար, բայց եթէ լա-
բան— ընթերցարաններու ձեռ-

նարկները ոչ եղբայրութիւն և ոչ
Պաւլարիոյ մէջ աշխատող ար-
գիւնքի մը հասած չեն պատճառը
դարձեալ մեծ մասամբ կոյր կու-
սակցամոլութիւնն է:

Պէտք է ատել այսինչը՝ քա-
նի որ տարբեր կուսակցութեան
մը կը պատկանի: պէտք է վար-
կաբեկել, ամեն գնով սեւացրել
այսինչը որովհետեւ ... եւս է:

Պէտք է տապալել այսինչ չե-
ղբ ձեռնարկները, խոչնդոտ-
ներ յարուցանել անոնց առջեւ,
որովհետեւ անոնց մէջ քիչ մալ
այսինչ կուսակցութեան նախա-
ձեռնութիւնը կայ: պէտք է
յաճախել այսինչ ընթերցարանը՝
որ թէպէտ բացուած է ամենուն
համար, որովհետեւ անոր վար-
չութեան մէկ կամ երկուքը այն-
ինչեան են ...

Եւ ահա այսպէս գրեթէ ամեն
ձեռնարկներու մէջ:

Ու խեղճ չեղբները որ կը
տեսնեն այս ամենը՝ անպալա-
բար կը խորշին յեղափոխակա-
նէրէն, մտածելով անհաշտ թէ
իրենք՝ չեղբ վերաբրկուին տակ՝
աւելի պիտի կրնան օգտակար
ըլլալը քան թէ կուսակցութեան
մը անհամբերաշխատէր գրօշին
տակ համարուելով, որ աւե-
լի զիրար սեւացրելու, զիրար
բղկեալու կրկէս մը դարձած է
կարծես:

Մէկգի՛ ուրեմն կուսակցամո-
լութեան կոյր ոգին, եղբայրա-
տեցութիւնը, ո՞վ յեղափոխա-
կաններ: Ձիրար սիրել սովորե-
ցէք, հոգ չէ թէ ձեր կուսակ-
ցութեան իրաւունքները յարգե-
լով հանգեք: Ճշմարիտ յեղա-
փոխութեան օրինակելի օրինակ-
ներ հանգիստացէք մեզի, միու-
թեան մէկ գրօշին տակ, որուն
տակ շատ աւելի մօտիկցած պիտի
գտնէք ձեզի մտաւորականնե-
րու չեղբ գաւառաբան ալ:

Եւ այն ատեն ապահովաբար
շատ աւելի գիւրացած պիտի
ըլլայ ձեր գործը, որ շատ մեծ
է արդարեւ ու վսեմ, ամբողջ
համայնքի մը համակրութեանը
արժանի:

Յեղափոխութիւն միայն,
անբաղդ Սասունի սիրուն, և ոչ
կուսակցամոլութիւն ...

ՀԱՅԿԱԿԱՆ

Կ. Պոլիս 18 Յուլիս

Դրան ցուցմունքներուն նայելով հայկական շարժումը վերաբացում է : Մեծ-Վեդերը երէկ Ռուսիոյ , Անգղիոյ եւ Ֆրանսայի գեսպաններուն հաղորդեց Դուռը հասած զանազան հետազոտ , որոնցմէ յայտնի կը տեսնուի թէ յեղափոխական խումբեր նորէն զէնքի փարեր են , բազմաթիւ անդթութիւններ գործեր , մահմետականներ սպաններ եւ թուրք զինուորներու վրայ զնտակ արձակեր են :

Դուռը կը կարծէ թէ կապակցութիւն մը կայ այս անկարգութեանց եւ մակեդոնական ապստամբութեանց մեծանակի միջոցաւ երկաթուղիներու գէժ գործած նոր ոճերներուն միջեւ :

(Հաճիր-Գեհեղ Գանձակի ամսուանոց)

18 յուլիս Ն. Ծ .

Փոխ կառավարիչ Անտրէյեւի սպաննութիւնը տեղի ունեցաւ ճեմավայրին վրայ , ուր շրջապայտողներու մեծ բազմութիւն կար կիրակի ըլլալուն եւ նուազանգէսին պատճառաւ : Անտրէյեւ որ վերջերս շատ մը սպաննական նամակներ ստացած էր , կ'ընկալուէր թէ միջոցաւ զոհուի : Դրոյ , սակայն երէկ տունը ձգած էր հոն պահպանութիւն ընելու համար , Անտրէյեւի գնտակէն փոխ-կառավարիչը արդէն գետին տապալիցաւ , մարդասպանը ապա ինչո՞ք գնտակ ալ արձակեց անոր վրայ , այնպէս որ սեղանի տեղ մեծաւ : Սպաննիչը կարծեօք Հայ մը , փախաւ միեւնոյն ժամանակ շրջապայտողները զայն հալածեցին , բայց իզուր : Իրենցը կասկածելի անձ մը ձերբակալուեցաւ :

ՅԱՅԻ

Մ. Խմբ. — Այս լուրին համառոտութիւնը արուած էր մեր նախորդ թիւի թուրքերէնի բաժնին մէջ :

ԻՐԱՐ ԿՈՒՏԵՆ

Տխուր , շատ տխուր սիւնակներ կը պարունակեն այս միջոցին Արեւիկայի Հին Հնչակեան (Նազարեթեան) եւ Դաշնակցական թերթերը իրարու նկատմամբ : Դեռ քիչ առաջ պառակտումի եւ եղբայրասպան դաւադրութիւններու համար իրարու ձեռք մեկնող իրարու ճակատ համբուրող լմենք երկուքս համբուրալի պիտի գործենք , ըսող երկու կուսակցութիւններ այսօր իրարու ճակատ կը խարանեն սա խօսքերով :

Ներկայիս կուսակցացոյց տալու որ «Հայ Յեղ. Դաշն. Ամեր. Կեդր. Կոմիտէ» անունը կրող մարմինը ոչ ալ ինչ է , եթէ խմբակ մը խաբեքաներու խմբակ մը շառլաթաններու — ի մի բան կապակցեցաւ մի ակունքի կեդրոններու ու պոռտախօսներու , որ մի նպատակ ունի միայն , այն է՝ շահագործել հայ յեղափոխական Դուռը եւ այդ գործի անխաղաղ մշակները վարկաբեկել , անուանարկել եւ յաճախ անոնց անաղարտ կենսաբան խորհուրդներու անապակ ճակատը մորտկել , որպէսզի այդու միջոց ունենայ միշտ վարկաբեկի տակ մեղալով իրենց ֆանտազմա , անամէջ ու ստատիկ գործունէութիւնն առաջ վարել :

Վերի խօսքերը Նազարեթեան մասնաճիւղ մըն է որ կ'ըսէ պաշտօնապէս եւ հրապարակաւ իսկ վարի տալերը կարգ մը ոչ-կուսակցականներ ստորագրած են յայտնի անուններով :

«... Դաւառակ պարագային , սեղ-ւոյս ոչ-կուսակցական հասարակութիւնը կոչուած պիտի ընէ բոլոր ոչ-կուսակցական հայրերեան եւ պիտի հռչակէ Կեդր. Կոմիտէի եւ համայն Դրօշակներունը Սրբազանն եւ որչափ անհրաժեշտ եւ վաւարանող հայութեան , աղբիւր ու պատառխաւտութիւնն անտի տեղի ունիցած ան-

համաձայնութեանց եւ պառակտմանց եւ ի մի բան հայութեան զինին փորձանք եւ հայ յեղափոխութեան համար մի վտանգաւոր տարր եւ պատուհաս ինչպէս եւ կեղեքիչներու կազմակերպ եւ մի փոխակ :

Երրորդ կուսակցութեան մը գէժ դաւաճում , ասոր ազդանունէր գործիչները սպաններ տալու եւ ամբողջ հայութեան ցանկութիւնը եղող Միութիւնը քանդելու համար դեռ երէկ իրարու ձեռք մեկնող երկու կուսակցութիւններ են որ այսօր այս կերպով զիրար խաբեքայ , դաւաճաւ , շառլաթաւ , զրպարտիչ եւ հայութեան գլխուն պատուհաս կանուանեն :

Արդ , Տէր խմբագիր , այս տը-խուր տալերը Դաշնակցական եւ Հին Հնչակեան երկու կուսակցութիւններու թերթերէն քաղելով ձեզ կը ներկայացնեմ , յայտնաւ համար թէ ատոնց գոյութիւնը իսկ ո՞րչափ վնասա-կար է յեղափոխական գաղափարին եւ հայրենիքի փ. դատը յաշտութեանը : Ինչքա՞ն որ միշտ հայ յեղափոխութիւնը քաղաք-րեւելու համար հրաւերներ կը կարգաւ եւ ձեռնպահ մնացողները ձեր վերջին մէկ խմբագրա-կան յօդուածով խաղաղեցած էիք , ինչ կը խորհեք այս փո-խուր եւ զգուշելի պատկերին առ-ջեւ ալլաւ չէ՞ք տե՛մք որ այդ յեղափոխական անուանումը երկու խմբակները ընդունակ են եղբի միայն դաւադրութեան եւ ոճի համար ձեռք ձեռք տալու , հետեւալ օրը իրենց զոհնուն կողպաւոր բաժնելու պահուն , իրենց միամիտ հետեւողները շա-գործելու , անոնցմէ դիմա՞ քա-շելու կէտին զիրար իսկական արժանիքով որակելու : Այսպի-

սիներուն համար էր՝ որ դուք մեզ աշակցութեան եւ օժանդակ-կութեան կը հրաւիրէիք :

Հաճեցէք , եթէ կարելի է պատասխանել : (*)

ԴԻՏՈՂ

(*) Պիտի պատասխանենք մեր մերձակայ թիւերէն մէկով : ԽՄԻ.

ՊԱՏԵՐԱԶՍ

Ճարտնչներու Գայ-Բինկը գրաւած ըլլալու լուրին յաջորդող այն յուզիչ լուրը թէ Բօրթ Արթուրի քով 33,000 Ճարտնչի ջարդուած են այսօր առաջին անգամ կարգը անցած է : Արդէն այդ լուրին պղտոր աղբիւրէ մը բղիթի-լը յկատարութեան ատենիւր , մենք սուշի օրէն «Ճինժու լուր» անուանած էինք :

Նոյնպէս բողոքածակ տուտ մըն էր Բօրթ-Արթուրը Ճարտնչներէ գրաւու-ած ըլլալու լուրը : Հերթեցաւ նաեւ այդ բողոքաբանները վրայ վերջին օրեր ընդհանուր յարձակում մը եղած ըլլա-լու լուրը : այդ օրեր մասնաւոր յար-ձակում մը միայն եղած է՝ բողոքա-վաքին իշխող ամբարձիւններէ միոյն վրայ , լայն ետ մղուած : Այդ միջոցին «Նեփթ» անուն ուսական արաբը-թաց պատերազմական նաւը յաջողա-ծ է Բօրթ-Արթուրէն ելլել ու ճարտն-չան առարկային դաշարման գիծին անց-նելով , Վլադիվոստօք փախել : Գայ-Բինկը կորուստին յաջորդող այդ եր-կու պարագաները մասամբ Իսթան-բուլ միջիթարական են : Իայց միւս կողմէ Սանչուրիոյ Ճարտնչական քա-նակներուն ընդհանուր հրամանատար զօրավար Սեմայի երթալ ճանիւր մէջ հաստատուելը Բօրթ-Արթուրի պաշարակներուն յուսահատութիւնը կը պատճառէ , արդէն մէկ անգամ հետա-գիւրներ հաղորդեցին թէ Սեմայ մտա-դիր է մօտ օրի մէջ ընդհանուր եւ

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱԶՄԱԿԷՊ հանդէսէ)

Շահաւատան դարձաւ զէպ ի Դաւիթն եւ ասաց . « Բեզ տալիս եմ իրաւունք խօսելու սորա երեսին ինչպէս որ խոստացար ինձ սորա բացակայութեամբ , թէ մի ըստ միոյն կ'ապացուցանես երիտիւն սորա գաղտնի դաւաճան գրադրութիւնները Ռուսաց կառավարութեան հետ՝ ընդդէմ մեր տէրութեան » : Դաւիթը լուռ մնաց . շահաւատան կրկնեց . « Աստ , երեսին , ինչ ես լուի » : Դաւիթը պատասխանեց . « Շահաւատան ապրած կենայ . ես կարող եմ սորա ճարտար լեզուին յաղթել . ինչ որ Զեր մեծութեան առաջ հաղորդել եմ , բոլորն ստոյգ է , սա գաղտնի գրադրութիւն ունի Ռուսաց կառավարութեան հետ եւ դաւաճան է Զեր տէրութեան » : Շահաւատան հարցրեց նորան . « Սորա գաղտնի գրադրութիւնն-րեց մէկը ցոյց տուր ինձ , ի հարկէ կուենանա՞ : ձեռքը ընկած կը լինի սորա գաղտնի նամակները մէկը , որով եւ հաւաստի ես , թէ սա դաւաճա-նում է մեր տէրութեան » : Դաւիթը դարձեալ լուռ մնաց : Շահաւատան նորից կրկնեց . « Աստ ե-րեսին , ինչ ես լուի » : Դաւիթը պատասխանեց .

« Ես սորա ճարտար լեզուին չեմ կարող յաղթել , ինչպէս Զեր առաջ արգ ալի (յայտնեցի) » : Շահ-աւատան զայրացած նորա վերայ՝ ասաց . « Զմար-տութիւնը պահանջում է , որ յանցաւորի յանցան-քը իւր երեսին ասես իր ներկայութեանը . լեզուի ճարտարութիւնը չէ կարող պատճառ լինել զեղ սուս կենալու » . եւ զայրացած հրամայեց Դաւիթին վերկենալ . ապա ուղղեց հայիտքը դէպի ինձ որ խօսակցութեան բոլոր ժամանակն ոտքի վերայ էի կանգնած՝ եւ հրամայեց ինձ նստիլ : Ես խոնարհ գլուխ իջեցրի եւ ինքզինքն շահաւատային ինձ իրա-րաւունք չորհել մի քանի խօսք ասելու եւ հրա-ման տուեց : Ես ցոյց տալով Դաւիթին ասացի . « Սա իսկ ունի ինձ հետ , ըստ Բուռմ ապօրինաբար յափշտակել էր իւր իշխանի խալիֆայութիւնը (իշխ-միւնի կաթողիկոսութիւնը) . մենք մի եկեղե-ցական կանոնը պահելով՝ աշխատեցինք եւ ապօ-րինի կաթողիկոսութիւնից ստրան հրաժարեցինք , եւ կարգեցինք Հայոց ամբողջ աղգից ընտրեալ անձինք մեծ խալիֆայ (կաթողիկոս) , մեր կրօնի բուն հետնի (հոգեւոր) գործերի կառավարիչ : Մեր ընտրած խալիֆան է օրհնում իւրեքքի մահրասան (կաթողիկոս) եւ արեւմտեան սուլ (մեծոն) , իւրեքքի ի մահրասան (կաթողիկոս) օրհնում է քէշիչ (քա-հանայ) , քէշիչը քանային (պսակ) է կատարում , երեկայ է մկրտում եւ մեռել է թաղում . եւ իբրեւ չոպան (հովիւ) ժողովրդին սովորեցնում է Աս-տուածապաշտութիւն , եւ առաւօտ ու երեկոյ նա-

մազ (աղթիք) է անում քիլիսայում (եկեղեցում) . կաղաչիմ ձեր արեգակնափայլ մեծութիւնը այստեղ Զեր ներկայութեանը հարցնել յարգելի խառնիքին , թէ ինչ իրաւունք ունին թաղուելու իւրեքքի խալի-խալիֆայի ընտրութեան գործին . ո՞րք քեզանք անկատար է մնացել , կամ երեխաներն առանց մկրտութեան կամ մեռելն առանց թաղելու , որ սորանք բարեխօսում են Զեր արեգակնափայլ տե-րութեան առաջ կրկին յանձնել եւ հաստատել Դա-ւիթին իւրեքքի խալիֆայութիւնը : Եթէ մեր օ-ճախին (իշխանին Սեփոսին) մի քու մեկն նուիրել են սորանք՝ թող քեզն իմ աչքս կ'իսին : Բայց երես-նում կասեմ . հայոց աղգի քրտինքով վանտակած եւ մեր օջախին նուիրած հարստութիւնը վանտակած է Դաւիթի ձեռքով եւ օջախը դատարկացած , իսկ սո-րանց ծոցիւր լցրած , դորա համար էլ այսօր Դաւիթին պաշտպան են հանդիսանում Զեր արեգակ-նափայլ մեծութեան առաջ » : Շահաւատան բոլոր այս իմ խօսակցութեան միջոցին իւր հայեացքը սեղդել էր իմ երեսին . երբ վերջացրի խօսքերս , մի խոժոռ հայեացք դարձրեց կանգնած խոնիրին եւ պարսկերէն բաւական երկար խօսեց . իսկ Դաւիթին հրամայեց դուրս գալ վրանից . նոյնը հրամայեց եւ խառնիքի բոլորին , որոնք խոնարհ գլուխ իջե-ցրին շահաւատային եւ դուրս ելան վրանից :

Դաւիթի կողմի խառնիքը զայրացած սկսել էին նորան նախատել . « Փու սէնին երեքին (թուք քո երեսին) , Օգրիւթե պիգէտէ խալաք էլլէտին շահ-

վճարական յարձակում մ'ընել բերդա-
քաղաքին վրայ. նոյնպէս կը հազարդ-
ուէր թէ միեւնոյն ատեն զօրավար
Քուրթի ամբողջ ուժովը պիտ խնայ՝ Բու-
րթաթի կիկին բանակին վրայ : Այս վեր-
ջիւն մեծ ճակատամարտէ մը առ այժմ
խուսափելու իր ծրագիրը, կը կարծուի
թէ, չպիտի կրնայ յաջողցնել, որովհե-
տեւ իր նահանջի ճամբաները գոցուե-
լու վտանգին մէջ են :

Անգլիական աղբիւրներէ ստացուած
լուրերը կը հաւատարմութիւն ծովակալ
Լէյքսի վրէժնէն եւ ընդհ. հրամանատար
Քուրթի ամբողջ ուժովը պիտ խնայ՝ Բու-
րթաթի կիկին բանակին վրայ : Այս վեր-
ջիւն մեծ ճակատամարտէ մը առ այժմ
խուսափելու իր ծրագիրը, կը կարծուի
թէ, չպիտի կրնայ յաջողցնել, որովհե-
տեւ իր նահանջի ճամբաները գոցուե-
լու վտանգին մէջ են :

Անգլիական աղբիւրներէ ստացուած
լուրերը կը հաւատարմութիւն ծովակալ
Լէյքսի վրէժնէն եւ ընդհ. հրամանատար
Քուրթի ամբողջ ուժովը պիտ խնայ՝ Բու-
րթաթի կիկին բանակին վրայ : Այս վեր-
ջիւն մեծ ճակատամարտէ մը առ այժմ
խուսափելու իր ծրագիրը, կը կարծուի
թէ, չպիտի կրնայ յաջողցնել, որովհե-
տեւ իր նահանջի ճամբաները գոցուե-
լու վտանգին մէջ են :

գաղանկ կեղծաւորութիւնը : Այս մար-
դիկը ճաթորդելով կամ փախչելով կը
ճաթորդենքու ջով իր թան Թուսնե-
րուն իր ստանանապատ եւ չափազանց-
ուած լուրեր կը հաղորդեն, զերեւե-
հիւրընկալողներուն հաճոյք պատճա-
ռելու համար. նոյնը կը խօսին ճա-
թորդներու գէմերէ միտմաներու քով
չանուէին : Բայց այս վերջինները Ձի-
նացիներուն կեղծաւորութեան ան-
տեղեակ չըլլալով հանդերձ, անոնց
ստեղծ տեղեկութիւնները նոյնու-
թեամբ կը գետնորէն իրենց պաշտոն-
ական տեղեկագիրներուն մէջ. օրինակ,
ծովակալ Ալէքսանդր կը գրէ Ջաքին
« Ձինացիներու ստեղծ տեղեկութեան
նայելով, ճաթորդիք 2000 հոգի կոր-
սնացուցին Լանվանթանի գերբերուն
տիրելու համար, բայց ետ մղուեցան.
մեր կարուստն եղած է 37 սպաննուած
եւ 248 վիրաւոր » եւ Թուսն կտա-
վարութիւնը այս հեռագիրը պաշտո-
նապէս կը հրատարակէ իրեն. ճիշդ
յուր, իր ժողովուրդը խաբելու համար
Բայց մենք պէտք չէ որ խաբու ինք :

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԷՆ Տ. Կարապետ
Խաչատուրեան հեռագրած է
Պատրիարքին թէ Տ. Գեորգ Առ-
լանեանի հրաժարումին առթիւ
նոր պատուիրակի մը ընտրու-
թիւնը կատարելէ առաջ, պէտք է
սպասել իր նամակին եւ Տ. Ասլան-
եանի Պոլիս հասնելուն ու հարկ
եղած բացատրութիւնները պիտի
տայ անշուշտ իր յանկարծ վե-
րադարձին պատճառներու մասին :

Բայց ինչ որ ալ եղած ըլլային
պատճառները, Տ. Ասլանեանի
յանկարծ վերադարձէն կը հե-
տեւ թէ ինք հաստատ կամքի
ու կորովի տէր մէկը չէ, թէեւ

գիտական ճիշդութեամբ մէջ իր բար-
ձր կարողութիւնը անուրանալի
է :

ՎԱՍԻՆԱՅԻ Թագ. Խորհրդոյ հը-
րաւերը որ մեր ներկայ թիւին
մէջ կը տեսնուի, պարզաբ կը
գնէ ամէն վառնայաբնակ աղ-
գայինի վրայ, որ քիչ մը հետա-
քըքրուի իր եկեղեցիով ու վար-
ժարանով որոնց անմիջական
պէտքերը կը մասնանշուի աղ-
հաւէրին մէջ : Խղճամիտ թա-
ղականութիւն մը ունինք ըսե-
լով պէտք չէ որ ժողովուրդը
բոլոր բեւը անոր վրայ ձգէ ու
ինք անտարբեր մնայ, ընդհա-
կառակը թաղականներուն լաւ
տրամադրութիւնները արդիւ-
նաւոր ընծայելու համար, ժողո-
վուրդին աշակցութիւնը ու քո-
չակրութիւնը անհրաժեշտ պայ-
մանն է :

ՊՈԼՍԷՆ ստացուած լուրերը
ցոյց կուտան թէ Մշտյ և Սասնոյ
թշուառացիներուն նպատակ
հասցնելու համար հանգանակու-
թիւն բանալու առաջարկը մեր-
ժուած է Գուռնէն. եւ եպարգոսը
պարզապէս յանդիմանած է Սը-
մանեանը ի պատասխան անոր
բազիր ին, որով նա բացատրած
էր թէ Բաղէշի նահանգին կա-
ռավարութիւնը հայ անմեղե-
րու գէմ անգթութիւններ գար-
ժած կամ թոյլարած է : Եպար-
գոսը Օրմանեանի այս յայտնու-
թիւնը անոր գէպի գահը եւ կա-
ռավարութիւնը անհաւատարմու-
թեան նշան մը նկատու է : Ան-
շուշտ, Օրմանեան այս կծու պա-
տասխանը ստանալէ յետոյ դո-
ղահար իր տեղը պիտի նստի ու
իր մեղկ կեանքը պիտ շարունակէ
անտարբեր գաւառացիներու վի-
ճակին :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱԽԻՐ

Թաղական Խորհուրդը ներկայիւ կը
փութայ հրաւիրել քաղաքիս արդոյ
Հայ հասարակութիւնը, յառաջիկայ
կերակէ, 11 Յուլիս, ի ժամ 10 ա-
ռաւոտեան, առ ի խորհրդակցութիւն
ի ստորեւ նշանակեալ կարեւոր խնդ-
րոց :

Ա. Շինութիւն Ս. եկեղեցւոյ շը-
ջարակին :

Բ. Նորոգութիւն Աղջկանց վարժա-
րանին :

Գ. Կարգադրութիւնք ազգ. երկ-
ռեւ վարժարանաց նոր տարեշրջանի
համար :

Լիայոյս եմք որ քաղաքիս պատո-
ւարժան ազգայինները պիտի փու-
թան անձամբ պատասխանել հրաւերիս
ներկայ գտնուելով նոյն օրը որոշեալ
ժամուն յ'Ազգ. խորհրդարան :

Ի Գիմաց Թագ. Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Ն. Գ. Քէստանեան Խ. Աղնուոր :

ԱԶԴ

Սօֆիայի Ազգ. Նախակրթարանի
ամսվերջի քննութիւնաց վիճակացոյց-
ներու բաշխման հանդէսը պիտի կա-
տարուի յառաջիկայ կիրակի—11 Յու-
լիս—կէս օրէն վերջ ժամը 3 ին Օտե-
սայի սրահին մէջ, Հանգեմին պիտի
մասնակցի նաեւ տնդւոյս «ՔնԱՐ»
երկրեւ երգեցիկ խումբը :

Աւստի ջերմապէս կը խնդրենք տեղ-
ւոյս երկսեռ աղգայիններէն, որ հա-
ճին ներկայ գտնուիլ սոյն հանդէսին :

Ի Գիմաց Սօֆիայի Առժամոյց Թագ.
Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Մ. Սարրպօհեանեան Ս. Մինասեան :



զատանքն հիւզելիքնտէ լքիզ էլ մնզ էլ խայտառ-
կեցիր շահաւատայի առաջը չը բաշարեցիր խօսել եւն »
Շահաւատան ինձ առաջուց տեսել էր Էջմիածնում
երբ այցելութեան էր եկել այնտեղ, յիշելով ինձ
այդ կրկին յորդորեց, որ ես բոլոր հայ հոգեւորա-
կաններին հետ ջանադիր լինենք Պարսից հպ տակ
Հայերի սրտերի մէջ հաւատարմութեան գագաթնէնք
գարկեցնել— գէպի Պարսից տէրութիւնը եւ նորան
հաւատացրի, թէ Հայոց աղքատ, չը նայելով իշ-
խանաւոր խաների աններկի հարստահարութիւննե-
րին, միշտ հաւատարիմ արձնագործութեամբ ծառա-
յում է Պարսից տէրութեան, եւս առաւել Ձեր
արեւակնափայլ բարձրութեան մարդասէր եւ ար-
գարազատ կառավարութեան միջոցին : Շահաւատան
ցոյց տալով իւր գլխաւոր առեւտրապրին, որի ա-
նունն էր Միրզա Բիւզիւրք [խաւոր գրագիր շահ-
գատայի] : Խոսեց ինձ. « Եթէ սարդարից կամ
այլ խաներից հարստահարութիւն լինի Հայերին եւ
ձեր օջախին, առանձին գրով իմացում տուէք սո-
րան, որ իմ հաւատարիմ գլխաւոր գրագիրն է »
Շահաւատան միաց իւր բանակով Խորվիրապի գաղ-
տում երկու շաբաթ, եւ ինձ պատուով պահեց իւր
մօտ :

Սորսից յառաջ, ինչպէս ասացի, շահաւատան եւ
կեղ էր Էջմիածին մեծ բաղնիսթեամբ սանդաղների
եւ խաների, ըստ սովորութեան : Ես Դանիէլ կա-
թողիկոսի մահից յետոյ վանական գործերի կառա-
վարիչ էի Էջմիածնում : Բոլոր միաբանութիւնը

չուրջառով, խաչով, խաչվառով դուրս եկաւ դի-
մաւորելու եւ շարական երգելով ընդունեց շահա-
ւատին : Որ նստած էր արաբական ձիու վերայ եւ
եռակից ունէր ձիաւորուած խաների բաղմութիւնը
եւ կառավարում էի, որ նոր այցելութիւնից ինձ վնաս
կարող է պատահել, կարծիքով, որ Դանիէլ կողմի
խաները չարախօսութիւն սրտի կը լինեն իմ մասին,
մէկ ու գեցի որ թագնուիմ եւ չեմեւալ շահաւատ-
յին, մէկ էլ մտածեցի, թէ անվայել է ինձ թագ-
նուել, առանց չուղաթի գնացի կանգնեցի միա-
բանութեան մէջ, նկատեցի որ Շահաւատայի սպա-
սաւորները ստիպում են միաբանութեան չտալով
գնալ, իսկ մեր ձեռքի եպիսկոպոսները եւ վար-
դապետները չէին կարողանում շտապել
ամառուայ սատիկ շողից էլ քրտինքը
երեսներէր վազում էր, իսկ ֆուռաշները շարունակ
ստիպում էին գոռալով. « Եգին երին » (արագ
քալեցէք) :

Այդ տեսնելով մօտեցայ շահաւատային եւ գլխի
իջցրի, նա ձին կանգնեցրեց. « Ինչ է ինդերդ »
« Շահաւատան ապրած կենայ : Աստուած այսօր, ընդ-
հանուր հայոց աղբի օջախն արժանացնում է : Ձեր
արեւակնափայլ մեծութեան այցելութեան, եւ ըստ
մեր նախնի սովորութեան օջախի բոլոր միաբանե-
րը ուրախութեամբ, առհասան (հոգեւոր) զգեստով
եւ մաղթանքով առ Աստուած, Ձեզ գիմաւորում
են : Ձեր մեծութեան ծառաներն ստիպում են ձե-

րունի մահրասաններին եգին-եգին եւրուես, սո-
րանց մէջ ձերուններ կան, միթէ կարող են
այս շողին ծանր զգեստներով Ձեր մեծութեան
արաբական ձիու երկով (ընթացքով) ընթանալ »

Նա իսկոյն ոտստեղ իւր սպասաւորներին, որ թրջ տան
միաբաններին իրանց կամքով ընթանալ : Ախրսս
պնդուեց : Նա ինձ հարցրեց. « Դու ինչոցո՞ւ ես », պատասխանեցի. « Օջաղի միաբանութիւնը չինձ նը-
շանակել է Ձեր մեծութեան գալստեան հանդիսա-
գիր եւ կառավարիչ » : Հասնեք Ղազարապատի
գրան առաջ, ասացի նորան. « Շահաւատը այստեղ
ձիոց իջաւ » : Նա էլ, միւս խաներն էլ բոլորը
իջան : Շահաւատան ինձ հարցրեց. « Առաջ գնա՞մ
գիարաթ քիլիսային (երկրպագելու եկեղեցւոյն) : Թէ
հանգստանա՞մ » : Պատասխանեցի. « Շահաւատը
առաջ ճանգատացաւ, յետոյ եկեղեցի գնաց » : Ես էլ
այնպէս կ'անեմ », ասաց նա եւ տարանք վեհարան :
Նկատեցի որ անխտիր բաղմնց մեր պատրաստած
բաղմոցների վերայ :

Առհասաբակ Պարսկաստանի թուրքերը խորում են
քրիտոնեաների բաղմոցներէր, բայց շահաւատան
ամենեւին խորութիւն չարեց եւ հրաւիրեց նշանա-
ւոր եպիսկոպոսներին եւ վարդապետներին նպաստու
նորա շուրջը :

(Շարունակելի)

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպոլ 7 յուլիս — Սոն կիւն-
լէրտէ գոնսօլարտան եւթիշէն
թէլէկրաֆլար Մուշ սանճաղըն-
տա աշվալ կիւն պէ կիւն սիւ-
քիւնէթ քէոպ իթտիկինի պիւլ-
տիւրիւրլար Սէֆալէթտէ պու-
լընանլարա քէֆալէթիւղ տէրէ-
ճէտէ մէքիւլաթ վէ թօնու-
վէրիւմէքտէ տիր Մէքիւլաթ թէ-
լէկրաֆլարէ գոնսօլարտ եա-
գընտա մուֆասալ րաքօրթլար
եօլլալաճաղարընը իլալէ իտի-
յօրլար :

— Սքիւպ վիւլալէթիւնտէ րէ-
տիֆլէր սալը վէրիւլալէր եա-
գընտա տիկէր վիւլալէթլէրտէն
տալի րէտիֆլէր տաղըտըլա-
ճաղար : Ֆաղաթ 16 թապուր
եէնի րէտիֆլէր չաղըրըլըլ տըր-
պուլար Մարթին թիւֆէնկի
եէրինէ Մալգէր թաշրաճաղ-
լար :

— Սքիւպ վէ Մանաստըր վի-
լալէթլէրինտէ թէքրար 17 Գու-
ցօ-Ուլաճ ճէմիլէթի թէշքիւ օ-
լընտըլ չէօյլէքի Մաքէթոնիտա
պու կիւն 50 ուլաճ ճէմիլէթի
մէվճուտ տըր :

Մ Ո Ի Հ Ա Ր Է Պ Է

Լօնտօն 7 յուլիս — Ճաքօնլը-
լար Բօրթ Արթուրըն շիմալի ճի-
հէթիւնտէ էլան գուվլէի աքքէ-
րիլէ չըգարմալա տէվաթ իտէյ-
օրլար :

— Ամէլիաթը աքքէրիլէ եէնի
խահիշլէ պաշլամըլ տըր Ռուսլա-
րա տալի եէնի իմտա տէթիշ-
մէքտէ տիր :

— Թիէնչիւնտէն ըուս մասլա-
հ թիկիւլարըն վէրտիկի մալիւ-
մաթ իւղրէ՝ Ճաքօնլըլար էլան
նուշլանկը ալամամըլլար :

— Թէնէրալ Գուրօթլիւնին
րաքօրթը իւղրէ, Ճաքօնլըլար
Լիւսօ-Նանի վէ Սիֆու-Նան եօլու
իւղէրինտէ աքքէր թէճէմիլ-
իթմէքտէ օլտըլընտան, Ռուսլար
իքի կիւն ճէնկլէշտիքտէն սօն-
լա կէրի չէքիւլմիշէր :

— Լօնտօն 7 յուլիս — Իւշ ա-
տէտ ըուս հարպ վաքօրլարը
թուան պօղաղընտան չըգուպ
պահրը մուհիտտէ պիւր ճաքօն
վաքօրը իւղէրինէ հիւճու իթ-
տիլէր պու վաքօրըն նէ հալտէ
գալաղըլ պիւլինմէյօր :

— Վէյլի Մէյլէ Էշար օլըն-
տըլընա կէօրէ, Ճաքօնլըլար ին-
քաօյա եաղըն թապիշանը զապթ
իթմիշէր Սէյսիթի-Գիւնկէ եա-
գըն 15000 Ճաքօնլըլար 5000
Ռուսլարա հիւճուլէ տաղըթմըլ-

լար, Ռուսլարտան 200 քիշի էօլ-
միւշ :

— Պերլին 7 յուլիս — Թէնէ-
րալ Գէլլէրի թաաղիպ իտէն
Ճաքօնլը սիւվարիլէր Մուգտէնին
էօնիւնէ եէթիշլիշէր :

Տ Ա Ի Ի Լ Ի Է

— Սօֆիա չըմէնտըֆէր սթա-
սիօնընտա մալի-գիւնէ՝ մէմուրի-
յէթիւնտէ պուլընտան 3 պուլկար-
լար կէշէն կիւն տէրտէսթլէ թէվ-
գըլի օլընտըլար : Պու 3 շախսըն
խաֆիյէլիկ սապիթ օլընըյօր
Եանի պուլար մէմուրիյէթլէրին
տէն իսթիֆստէ իտէրէք, Սօֆիա
թիւրք գօմիւէրի Ֆէրուհ պէյ-
խաֆիյէլիք իտէրլէր իմիշ թաշ-
գիւլաթ տէվաթ իտէյօր :

— Տալիլիյէ նաղըրը Մ. Տ.
Բէթքալ վէ մալիյէ նաղըրը Մ.
Բալէքալ տիւն չէհրիմիլէ վաք-
օլտուլար, վէ պուկիւն քէնտի
տօսթլարը վէ թարաֆտարարը
իլէ յ. Գօսթանթինօ մանաստըրը
նա թէֆէրիւճէ կիթիլէր :

Ռումանիւնըն սպեան մէքթէպ-
լէրին միւտէրըրիւլէրինտէն 170
քիշի տիւն սաալաճ Սաֆօլիթէ
եէթիշմիշ օլուպ, օրատտ մէ-
արիֆ նաղըրը թարաֆընտան Մ.
Տօրէվաքի անլէրի սէլաուլարը
օլաճաղ : Ռումէն հօճալարը Սօ-
ֆի յա կիտուպ պուլկար միւտէր-
րիւլէրի իլէ կէօրիւշէքլէրի
կիպի իքի միլլէթ պէյնիւնտէ
միւնասէպաթը իթիլտիքեարտ-
նէյէ պիւր թէմէլ աթմըլ օա-
ճաղար :

Ր Ո Ւ Ս Վ Է Ի Ն Կ Ի Լ Ի Զ

Մալաքքա նաթ ինկիլիզ նաղլիյէ
վաքօրը Ռուսլարտան թուլու-
լարալ, Բօրթ Սալիտէ
կէօթիւրմիւշէր տիր : Մալ-
քա տէրուինտէ պուլընտան մու
հիւմաթ Ագսաի Շարգտա պուլը-
նան ինկիլիզ տօնանմաքընա ա-
յիւ օլտըլընը վաքօրըն գաթի-
թանը սէօյլէմիշըրթէսթ իթմիշ
իտէտէ : Ռուսլար պիւլթիւն թալ-
ֆալարը վէ վաքօրը եէսիւր մա-
գալընտա Սէվաստաթալ կէօթիւր
մէք էֆքեարընտա ըմըլլար :
Բէթէրապուրկտաքի ինկիլիզ էլ-
ճիւի չէտիտէն Բօթէսթ իթմիշ
վէ սէրպէսթ պըրաղըլմասընը
իտտաա էյլէմիշ տիր : Ռուսլարըն
պու հարէքթի Լօնտրատա պէօ-
յիւք հէյէճան հասըլ իթտի,
մուխալիֆ բարթիլէրին րէյիս-
լէրի տալի պու խուսուտա հիւ-
քիւմէթէ մուալէնէթ իտէճէք-
լէրի արղ իթտիլէր Սքանտարտ
չէօյլէ եաղըյօր : Ռուսլարըն Մա-

լաքքոյը Սէվաստաթալ կէօթիւր-
մէլէրինէ մէյտան վէրիլէր իտէ-
էն սուլհէքէրվէր պիւր ինկիլիզ
տալի հիւքիւմէ շու սիւալը ի-
տէճէք տիր — Ինկիլիզ տօնան-
մասը նէյյէ խրտմէթ իտէճէք :
— Սէրիպըլ նաթ ինկիլիզ հարպ
սէֆիւնէսի Գըրմըղը տէնիլտէ
Ռուս վտօրլարընը թաաղիպ իթ-
մէկէ էմիր ալմըլ տըր :

Ս Ս Ն Թ Է Լ Է Կ Ր Ա Յ Ի Ա Ր

Թիէնճին 9 յուլիս
Շալէաթա պիւնաէն Ճաքօնլը-
լար տիւն Բօրթ Արթուրը թօ-
բա թուլմուշլար :

Բարիզ 9 յուլիս
Բէթէրապուրկտան «Հաւա» ա
իշար օլընտըլը իւղրէ, տիւն Մօս-
կուտա ալընտան պիւր թէլէկրա-
ֆա պիւնաէն, Թէնէրալ Գուրօթի-
նին շարգ օրտուսը Ռուս օրտու-
սընըն սօլ գօլընը եարմըլ կէշ-
միշ տըր : Ճաքօնլըլար Մուգտէնէ
տօղրու իլէրիլիյօրլար :

Լօնտօն 9 յուլիս
Միւնիթր Պալթուր Մալաքքա
վաքօրըն Ռուսլարտան սէրպէսթ
պըրաղըլտըլընա տալի հաւա-
տիս ալընտաղընը Բարլըման-
տա պէյան իթտի :

Շանք-Հալթ-Վանտա ֆրանսըլ վէ
ճաքօն աքքէր էրի պէյնիւնտէ վու-
գու պուլան հատիւնտէն սօլալը
Տիլլի Գրօնիլէ ինքաուտտան
պէր վէճհի աթի պիւլտիլէրիլ :

«Ռուս պանտէրատը թաշըյան
2 ֆրանսըլ ճաքօն աքքէրլէրին-
տէն գաթլ օլընտըլար : Էրթէ-
սի կիւնիւ Ֆրանսըլլար ճաքօն-
լըլար եիւղէրինէ հիւճու իտէ-
րէք 7 քիշի գաթլ իթտիլէր վէ
15 քիշի եարէլէտիլէր :

Սթանպոլ 9 յուլիս
Էճնէպի միւլէրիյէ աճէնթլէ-
րին սէրքեաթիպլէրի՝ Պուլկարիա
տան օճաղարընա ալտէթ իթ-
մէքտէ օլան մուհաճիլլէրին ահ-
վալինի թէֆթիշ իշիւն սինօր
պօյընա կէզմէկէ չըգտըլար :

Գօթիլթալարըն աթվալը հաղը-
րէսինտէն սօլալը ալընտըն եէ-
նի մալիւմաթ պիւնաէն, Սարա-
ֆուլ բարթիլի չէթալար իլէ եէ-
նի աթլիլթալ հաղըրլանաղտա
վէ վիւլալէթլէրտէ, հատտա ըմ-
լթանալտա տիւնաթ թէրթիպի
ու իսթիմալը իշիւն թէշքիլաթ-
աա պուլընմաղտա ըմըլ :

Թ Ի Ի Ճ Ճ Ա Ր Ի Յ Է

ՎԱՅՆԱՆ,	յուլիս 10
ՉԱԿԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վազօն	54-59 լիպ. 9-50 /11- 40
Արապա	52-60 լիպ. 9-11-80
ԱՐՔԱՆ	
Վազօն 100 քիւ	8. 30/ 8.35
Արապա 42-45 լիպ.	5- 5-60
ԵՈՒԼԱՖԱՐԱՊԱ 33/36 լպ.	11.40/11.50
Վազօն 100 քիւ	11/20-
ՖԱՍՈՒԼԷՆԱ	100 քիւ 17/19-
Արապա 100 քիւ	18-19
ՏԱՐԸ	արապա 6/7- 6, 80
ԿՕԼՕ2	արապա 55-60 լպ. 9-80/10-
ՄԻՍԻՐ	Վազօն 7.20 -7.40
ՉԱՎՏԱՐ	արապա 7.-7.20
«	Վազօն 6.40-6.60
Կիւնտէ 10 -15	Վազօն վէ 20-25
արապա կէլմէքտէ	Վազօն մուամէլէսի
պօրլէն 20 ֆր.	արապա մուամէլէսի
պօրլէն 20 80.	

ՍՈՐՐԱՅԻՅԷ

Նաթուլտն 20, 65 ֆրանք
Սաթ. լիբարը 22, 85 ալիսին ֆրանք

ՊՈՒՂՏԱՅ

Վարնա	բիւստանտա պաղալէյ
մալլէրին պու կիւնքի ֆիլպթը,	ալթու
ֆրանք իլէ :	
ԳԱՎԷ	1,80/2,-
ՇԵԻԷԼ Նէմցէ	63
ՇԵԻԷԼ [քէմիլ] սանսըգ	33,-
ԻԻՐԻՆՇ Ֆիլպթ չուվալը	41,-
» ճաքօն	38,
» Ինկիլիզ	25.50
» Բիզն	53,-
ԿԱԶ	սանսըլը 8. 60
ՉԵԻԷԼ Էաղը քիւ	80 - 90
ԵՈՒՄՈՒՐԻՍԱ 100 ապէտ	4,20-50
ԳՈՒՐՈՒ Իւղիւ	. 25

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ

Փողոց Չար Պօրիս
Հայ Աղլալաց վարժարանի կից

Վստահօրէն կը յայտարարեմ թէ ինձ
գիտօղիւրը ըստ ամենայնի կարող եմ
զօնացունել շնորհը իմ 33 տարուան
փորձառութեան եւ արուեստին կատա-
րեալգործման համար ըրած զօնոգու-
թիւններուս :

Վստահ յարգոյ հասարակութիւնը
այդ հաստատելու համար թող հաճի
անգամ մը լուսանկարչատուն ալցե-
լի եւ գիտել ի ցոյց արուած գործե-
րս :

Դիմելը շատ գիւլամտալիկ են :
Լուսանկարիչ
Օ . ՄԵՍՐՈՎԻ

Одговорникъ А. Кѣрбетянъ
печатница «Возможность» — Варна.

